ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՀՈՎՍԵՓԻ

ՀՈՐԴԱՆԱՆԱԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ. ԱՌՃԱԿԱՏՈՒՄԻՑ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Է 00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պ.գ.թ., դոցենտ Ա. Ա. Փաշայան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ. Ռ. Կ. Կարապետյան
պ.գ.թ. Գ. Կ. Վարդանյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2015 թ. հունիսի 30-ին, ժամը 15:00-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019 Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24/4)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. մայիսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ պ.գ.թ., դոցենտ Ռ.Պ.Ղազարյան

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հորդանանի Հաշիմյան Թագավորության և Իսրայել Պետության հարաբերությունների ուսումնասիրությունն ունի թե՛ գիտական, թե՛ քաղաքական կարևորություն: Այն օգնում է ոչ միայն երկկողմ հարաբերությունների ու մերձավորարևելյան հակամարտության, այլև Հորդանանի և Իսրայելի արտաքին քաղաքականության առանձնահատկությունների ճիշտ գնահատմանը: Հորդանան-Իսրայել հարաբերությունների կարևորագույն առանցքներից մեկը պաղեստինյան հարցն է: Այդ իսկ պատճառով պաղեստինյան գործոնով պայմանավորված երկկողմ հարաբերությունների ուսումնասիրությունը ոչ պակաս կարևոր է:

Հորդանանի Հաշիմյանների և սիոնիստական շարժման գործիչների, իսկ հետագայում՝ Հորդանանի և Իսրայելի միջև հարաբերությունները սկզբնավորվել են 20-րդ դարի սկզբին: Մոտ մեկ դարի պատմություն ունեցող հարաբերությունները ծառայել են երկու կողմերի շահերին, իսկ երկկողմ պայմանավորվածությունները վճռորոշ նշանակություն ունեցել մերձավորարևելյան հակամարտության զարգացման գործում: 1948-49 թթ. և 1967 թ. արաբ-իսրայելական պատերազմների արդյունքում Իսրայելը գրավեց ՄԱԿ-ի 1947թ. նոյեմբերի 29-ի ԱԽ 181(II) բանաձևի հիման վրա Պաղեստին պետության համար նախատեսված բոլոր տարածքները: Արդյունքում, Հորդանանը դարձավ ամենամեծ թվով պաղեստինցի փախստականներ հյուրընկալող պետությունը: Ստեղծված իրավիճակում Հորդանանի իշխանությունները շահագրգռված էին պաղեստինյան խնդրի շուտափույթ կարգավորմամբ: Մյուս կողմից, Հորդանանը ցանկանում էր Իսրայելի հետ վարել ուրույն և ոչ առճակատման տանող քաղաքականություն:

1970-ականներին Հորդանանի Հուսեյն (1953-1999 թթ.) թագավորն առաջ քաշեց հորդանանա-պաղեստինյան միացյալ պետության գաղափարը, սակայն 1980-ականների վերջին հրաժարվեց դրանից: 1994 թ. Հորդանանը ևս, հետևելով Եգիպտոսի օրինակին, Իսրայելի հետ կնքեց անջատ հաշտության համաձայնագիր: Երկու երկրների միջև հաստատվեց բազմակողմ համագործակցություն: Ամրագրվեց Հորդանանի Հաշիմյանների խնամակալության իրավունքը Երուսաղեմի իսլամական սրբատեղիների, մասնավորապես՝ Տաճարի լեռան Ալ-Ակսա մզկիթի նկատմամբ: Չնայած արաբական աշխարհում հնչած սուր քննադատություններին՝ Հորդանանը Եգիպտոսի նման մեկուսացման չենթարկվեց:

1999 թ. փետրվարին Հուսեյն թագավորի մահից հետո իշխանության եկած Աբդալլահ երկրորդը թե՛ Իսրայելի և թե՛ Պաղեստինի հարցում շարունակեց հոր քաղաքականությունը: Նրա համար գերխնդիր դարձավ ազգային անվտանգության կայունության պահպանումը, քանի որ հորդանանյան հասարակությունը, որի մոտ կեսը պաղեստինցիներ էին, շատ զգայուն էր պաղեստինյան հարցի նկատմամբ: Հորդանանը, ակտիվորեն համագործակցելով ԱՄՆ-ի և տարածաշրջանի արևմտամետ վարչակարգերի հետ, ձգտում էր «միջազգային քառյակի» (ԱՄՆ, Ռուսաստան, Եվրամիություն և ՄԱԿ) հետ գործընկերության շրջանակներում պահպանել պաղեստինյան հարցի կարգավորման իր միջնորդական կարգավիճակը: Ճիշտ է, Աբդալլահ երկրորդի կառավարման շրջանում Հորդանանի

հարաբերություններն Իսրայելի հետ համագործակցային էին, սակայն ժամանակ առ ժամանակ աչքի էին ընկնում լարվածությամբ, ինչը հիմնականում կապված էր պաղեստինյան հարցի կարգավորված չլինելու հետ:

Իր հերթին, Իսրայելի համար Հորդանանի հետ հարաբերությունների ամրապնդումը շահեկան էր, քանի որ հնարավորություն էր տալիս, բացի Եգիպտոսից, արաբական աշխարհում ունենալ ևս մեկ հեղինակավոր դաշնակից, ինչպես նաև հուսալի ու հավասարակշռված հարևան, որի հետ կարող էր համագործակցել Իսրայելի ազգային անվտանգության ու հատկապես պաղեստինյան հարցի շուրջ: Երկու կողմի համար էլ համագործակցությունը ռազմավարական նշանակություն ուներ: Եվ չնայած գոյություն ունեցող բազմաթիվ դժվարություններին ու հորդանանյան հասարակությունից եկող դժգոհություններին՝ թե՛ Իսրայելի և թե՛ Հորդանանի իշխանությունները հետամուտ եղան 1994 թ. Խաղաղության համաձայնագրի դրույթներին:

«Հորդանանահիսրայելական հարաբերությունները 20-րդ դարի վերջին 21-րդ դարի սկզբին. առճակատումից՝ համագործակցություն» թեմայի արդիականությունը պայմանավորված է Հորդանան-Իսրայել հարաբերությունների և պաղեստինյան հարցի էությունն առավել համակողմանի ուսումնասիրելու անհրաժեշտությամբ, առանց որի մերձավորարևելյան արդի իրողությունների և երկկողմ հարաբերությունների ներկա ողջ պատկերը հնարավոր չէ հասկանալ:

Հետազոտության խնդիրներն ու նպատակները: Ատենախոսության թեման ընտրվել է 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին հորդանանահիսրայելական հարաբերությունների և այդ համատեքստում պաղեստինյան հարցի ուսումնասիրության և ամբողջական բնութագրման նպատակով, որին հասնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել Հուսեյն թագավորի (1953-1999 թթ.) քաղաքականությունը պաղեստինյան հարցի վերաբերյալ, ինչպես նաև նշված շրջանում Հորդանանի հարաբերություններն Իսրայելի հետ:
- Վերլուծել հորդանանա-պաղեստինյան միացյալ պետության Հորդանանի առաջ քաշած հայեցակարգը, դրա նկատմամբ կողմերի դիրքորոշումները, ինչպես նաև ծրագրի ձախողման պատճառները:
- Հետազոտել 1994 թ. հորդանանահիսրայելական Խաղաղության համաձայնագիրը և դրա ազդեցությունը երկկողմ հարաբերությունների և մերձավորարևելյան հակամարտության հետագա զարգացումներում:
- Քննության ենթարկել հորդանանահիսրայելական համագործակցության ընդհանուր շրջանակները՝ շեշտադրելով պաղեստինյան գործոնի նշանակությունը 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին:
- Լուսաբանել երկու երկրների փոխադարձ շահերն ու երկկողմ հարաբերություններում առկա տարաձայնությունների պատճառները, ինչպես նաև քննության ենթարկել դրանց ազդեցությունը պաղեստինյան հարցի զարգացումներում:
- Հետազոտել Իսրայելի և պաղեստինյան հարցի նկատմամբ Աբդալլահ երկրորդ թագավորի քաղաքականության առանձնահատկությունները:

- Քննության ենթարկել «արաբական գարնան» ազդեցությունը երկկողմ հարաբերությունների զարգացման հարցում՝ անդրադարձ կատարելով նաև դրանց հեռանկարին:
- Վերլուծել ջրի գործոնի նշանակությունը երկկողմ հարաբերություններում:
- Անդրադարձ կատարել երկկողմ հարաբերությունների համագործակցության շրջանակներին:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության թեման, ընդհանուր առմամբ, մեզանում դեռևս չի դարձել հատուկ ուսումնասիրության առարկա: Չնայած հորդանանաիսրայելական հարաբերությունների պատմության որոշ ասպեկտներ, և մասնավորապես, Հորդանանի և Իսրայելի միջև 1994 թ. կնքված Խաղաղության համաձայնագիրը քննարկվել են հայ հետազոտողների կողմից, սակայն դրան հաջորդած շրջանը (1994-1999), ինչպես նաև Աբդալլահ երկրորդ թագավորի կառավարման տարիները, գրեթե դուրս են մնացել հայ արևելագիտության ուսումնասիրության շրջանակներից:

Ներկա աշխատությունն իր բովանդակությամբ հայրենական արևելագիտության մեջ առաջին աշխատությունն է, որտեղ համակողմանի վերլուծության են ենթարկվել հորդանանաիսրայելական հարաբերությունները 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին ու դրանց զարգացման առանձնահատկությունները: Աշխատանքում ուսումնասիրվել են մերձավորարևելյան հակամարտության կարգավորման հորդանանյան տարբերակները և այդ հարցում Իսրայելի և պաղեստինցիների մոտեցումները:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 20-րդ դարի վերջից մինչև 21-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածը, որը համընկնում է Հորդանանի երկու առաջնորդների՝ Հուսեյն (1953-1999) և Աբդալլահ թագավորների կառավարման տարիներին: Ընտրությունը պայմանավորված է Հորդանանի և Իսրայելի հարաբերությունների հիշյալ շրջանի կարևորության, ինչպես նաև պաղեստինյան հարցում երկկողմ հարաբերությունների ունեցած ծանրակշիռ ազդեցության հետ: Ատենախոսության հիմնական շեշտադրումները վերաբերում են Աբդալլահ երկրորդ թագավորի կառավարման փուլին: Ատենախոսությունը 2014 թ. ավարտելը հիմնավորված է նույն թվականի վերջին Հորդանանի և Իսրայելի հարաբերությունների վատթարացմամբ, որի հետևանքով Հորդանանն Իսրայելից հետ կանչեց իր դեսպանին:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ատենախոության հիմքում ընկած են 20-րդ դարի վերջի և 21-րդ դարի սկզբի հորդանանաիսրայելական հարաբերությունների քննական մեկնության և փաստերի համեմատական-համադրական վերլուծության սկզբունքը:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Սույն ատենախոսության մեջ առաջ քաշվող դրույթները, արված մեկնաբանությունները և եզրահանգումները կարող են օգտագործվել Հորդանանի, Իսրայելի, Պաղեստինի, առհասարակ Մերձավոր Արևելքի երկրներում քաղաքական գործընթացներին նվիրված հետազոտություններում և դասախոսություններում: Ատենախոսության մեջ առաջ քաշված դրույթները կարող են օգտակար լինել քաղաքագիտական

վերլուծություններում, պետական մարմինների համար վերլուծական նյութեր պատրաստելու, ինչպես նաև պաղեստինյան խնդրի և հորդանանաիսրայելական հարաբերությունների նկատմամբ ՀՀ արտաքին քաղաքական որոշ հարցերի մշակման տեսանկյունից:

Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը: Ներկայացվող ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնում: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները լուսաբանվել են հեղինակի հոդվածներում և 2014 թ. Արևելագիտության ինստիտուտում կազմակերպված «Երիտասարդ արևելագետների» XXXIV հանրապետական գիտաժողովում:

Հեղինակի հրատարակած հոդվածների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

Օգտագործված գրականության տեսություն: Ատենախոսությունը գրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն և արաբերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա: Հետազոտությանը նպաստել են օտարազգի ուսումնասիրողների՝ քննարկվող թեմային առնչվող արժեքավոր աշխատությունները, հոդվածները, ինչպես նաև պաշտոնական հրատարակությունները, քաղաքական գործիչների հարցազրույցները, հուշերը, հայտարարությունները և միջազգային մամուլի նյութերը: Ատենախոսության շարադրման հարցում կարևոր է եղել Հորդանանի Աբդալլահ երկրորդ թագավորի «Մեր վերջին լավագույն հնարավորությունը» հուշագրությունը[1]:

Աշխատանքի համար որպես սկզբնաղբյուր են ծառայել Հորդանանի Հուսեյն և Աբդալլահ թագավորների պաշտոնական կայքէջերի[2], Իսրայելի արտաքին գործերի նախարարության, Քնեսետի[3], ՄԱԿ-ի որոշումները[4], Իսրայելի և Հորդանանի միջև կնքված պայմանագրերը[5], պաղեստինյան հարցի վերաբերյալ միջազգային որոշումները[6], պաղեստինաիսրայելական հակամարտության կարգավորման

---

[1] فرصـــــتنا الأخـيرة: السـعي السـلامنحو فـي وقـت لخطـر,عبـــدالله الثـــاني بـن الحســين, الأردن 2011

[2] Տե՛ս http://www.kinghussein.gov.jo; http://www.kingabdullah.jo.

[3] The Washington Declaration, Israel-Jordan, the United States, July 25th, 1994, State of Israel, Ministry of Foreign Affairs, Jerusalem; Declaration of Principles on Interim Self-Government Arrangements, Ministry of Foreign Affairs, State of Israel, Jerusalem, September, 1993; Remarks by Foreign Minister Shimon Peres on the Occasion of the Signing of the Israeli – Palestinian Declaration of Principles, Washington, 13 September, 1993; Israel's Disengagement Plan: Selected Documents, Israeli Ministry of Foreign Affairs, http://www.mfa.gov.il. Statement to the Knesset by Prime Minister Meir 26 July, 1972, volume 1-2, 1947-1974, www.mfa.gov.il; The Israeli Peace Initiative (IPI) – in response to the Arab Peace Initiative (API), Proposal - April 6, 2011, http://www.ynetnews.com.

[4] United Nations General Assembly Resolution 194 III /1948/, http://unispal.un.org. United Nation Security Council resolution 237 /1967/, http://unispal.un.org.

[5] Text of Accord between Jordan, Palestine Liberation Organization տե՛ս http://articles.latimes.com; Treaty of Peace between The Hashemite Kingdom of Jordan and the state of Israel, http://www.kinghussein.gov.jo; A Geneva Accord. A Model Israeli-Palestinian Peace Agreement. Draft Permanent Status Agreement. Full text, http://www.geneva-accord.org/mainmenu/english.

[6] Official translation of the full text of a Suadi-inspired peace plan adopted by the Arab summit in Beirut, 2002; The Arab Peace Initiative, http://www.al-bab.com; Israeli-Palestinian ceasefire and

վերաբերյալ Հորդանանի մշակած հայեցակարգերը[7], իսրայելցի, հորդանանցի և պաղեստինցի պետական-քաղաքական գործիչների հայտարարություններն ու հարցազրույցները[8], հուշագրությունները, ԱՄՆ-ի պետդեպարտամենտի նյութերը[9]:

Ատենախոսի առաջ կանգնած խնդիրների լուծմանը նպաստել են թե՛ արաբ, թե՛ այլազգի հեղինակների աշխատանքները: Արաբաիսրայելական հակամարտության զարգացման տարբեր հիմնախնդիրների ուսումնասիրությանը մեծապես նպաստել են Վ. Կիսելյովի, Ի Բելյաևի, Ե. Պրիմակովի, Ռ. Օվինիկովի, Ա. Զախարովի, Օ. Ֆոմինի, Ե. Պիրլինի, Լ. Մեդվեդկոյի, Ամեր Ռաշիդի, Աշեր Սասերի աշխատանքները[10]:

Հորդանանաիսրայելական հարաբերությունների ուսումնասիրման տեսանկյունից օգտակար են եղել Ա. Թեյլորի, Ջ. Խուրիի, Ջ. Գրենվիլի, Մ. Հեյքալի, Հ. Քիսինջերի, Դ. Հիրոյի, Պ. Կալվակորեսիի, Կ. Խամզինի, Ա. Դեմչենկոյի, Լ. Բաազովայի, Ֆ.Միսայի[11] ուսումնասիրությունները:

---

security plan, proposed by CIA director George Tenet, which took effect on 13 June 2001, www.al-bab.com; The Sharm el-Sheikh Memorandum on Implementation Timeline of Outstanding Commitments of Agreements Signed and the Resumption of Permanent Status Negotiations, http://www.palestineinarabic.com; A Performance-based Roadmap to a Permanent Two-State Solution to the Israeli-Palestinian, Conflict, http://www.un.org/News/dh/mideast/roadmap122002.pdf; Aqaba Summit, June, 2003, http://www.al-bab.com; The Clinton Parameters, http://israelipalestinian.procon.org; Annapolis agreement: full text, 27 November, 2007, http://www.theguardian.com.

[7] Միացյալ Արաբական Թագավորության հայեցակարգային բանաձևի 12 հիմնական դրույթները տե՛ս M.S. Braizat, The Jordanian-Palestinian Relationship. The Bankruptcy of the Confederal Idea, London, 1998, p. 58; خطاب الملك حسين إلى الشعب حول مشروع إقامة المملكة العربية المتحدة , https://alraipress.wordpress.com; The Jordanian-Egyptian Proposal Proposals for a Cease-Fire, April 19, 2001, http://www.mideastweb.org/jordanegypt.htm.

[8] 1972 թ. մարտի 16-ին Իսրայելի վարչապետ Գոլդա Մեյերի ելույթի տեքստը տե՛ս Statement to the Knesset by Prime Minister Meir, 16 March 1972, volumes 1-2: 1947-1974; Statement of HM King Abdullah II on the Election of Mr. Ehud Barak as Prime Minister of Israel, issued Tuesday, May 18, 1999, www.kingabdullah.jo; Address by Prime Minister Yitzhak Rabin to a Joint Session of the United States Congress on the Occasion of the Rabin-Hussein Meeting, Jerusalem, July 1994, http://mfa.gov.il.

[9] US Department of State Dispatch, Volume 2, Number 25, June 24, 1991, p. 459.

[10] Киселев В., Палестинская проблема и Ближневосточный кризис, М., 1983; Նույնի, Палестинская проблема в международных отнашениях: Региональный аспект, М., 1988; Беляев И., Примаков Е., Египет: время президента Насера, М., 1974; Նույնի, Мир после 11 сентября, М., 2002; Овинников Р., Зигзаги внешней политики США, М., 1986; Захаров А., Фомин О., Кэмп-Дэвид: политика обреченная на провал, М., 1982; Пырлин Е., Ближневосточный лабиринт, Москва, 1996; Медведко Л., ...Этот Ближний бурлящий Восток, М., 1985; Амер Рашид, Палестинская проблема. История и современность, М., 2009; Susser A., Israel, Jordan and Palestine: Two State Imperative, Brandeis University Press, 2010.

[11] Taylor A. R., Prelude to Israel. An Analysis of Diplomacy 1897-1947, Beirut, 1970; Khouri F. J., The Arab-Israeli Dillema, New York, 1968; Гренвиль Дж., История XX века. Люди, события, факты, М., 1999; **2000** محمد حسنين هيكل, المفاوضات السرية بين العرب و اسرائيل, القاهرة; Киссинджер Г., Нужна ли Америке внешнее политика, М., 2002; Hiro D., The Essential Middle East, New York, 2003; Кальвокоресси П., Мировая политика после 1945г., Москва, 2000; Хамзин К. З., Пять лет мира: иордано-израильские отношения в 1994-1999 гг., տե՛ս Ближний Восток и современность, вып. 9, ИИИиБВ, Москва,

Հորդանանա-պաղեստինյան հարաբերությունների հետազոտության տեսանկյունից շահեկան են եղել Մ. Բրեյզաթի, Դ. Դիքերի և Պ. Ինբարի, Ն. Էշտոնի, Ե.Մելքումյանի, Կ.Աբիլովի[12] ուսումնասիրությունները: Հորդանանի արտաքին քաղաքական հարցերին նվիրված հետազոտություններից օգտակար են եղել Վ.Շենիկովի, Ա.Նիկիտինի, Ջ.Շարփի հետազոտությունները[13]:

Հարկ է նշել, որ հայ արևելագիտությունը ևս լավագույնս ուսումնասիրել է պաղեստինյան հակամարտությունը և դրան առնչվող մի շարք խնդիրներ, ինչի օրինակ են Ն. Հովհաննիսյանի[14], Ռ. Կարապետյանի[15], Շ.Կարամանուկյանի[16], Ա. Հովհաննիսյանի[17] և այլոց աշխատանքները: Հորդանան-Իսրայել հարաբերությունների հետազոտության հարցում կարևոր է Դավիթ Վիրաբյանի «Հորդանանա-իսրայելյան հարաբերությունները (1948-1994թթ.)» վերնագրով ատենախոսությունը, որը շահեկան է եղել նաև հիշյալ ուսումնասիրության շարադրման ընթացքում[18]:

2000; Демченко А. В., Израильское направление внешней политики иорданского короля Абдаллы II и палестинская проблема в кн. Израиль в современном мире, сборник статьей, Москва, 2009; Баазова Л. Х., Новый король Иордании Абдалла и иордано-израильские отношения, Ближний Восток и современность. Сб. Ст., вып. 8. Отв. Ред. В. А. Исаев, А. О. Филоник, Москва, 1999; Mitha Farooq, The Jordanian-Isreaeli Relationship. The Reality of Cooperation, Middle East Policy, vol. XVII, Summer 2010, No. 2.

[12] Braizat M. S., The Jordanian-Palestinian Relationship. The Bankruptcy of the Confederal Idea, London, 1998; Diker Dan and Inbari Pinchas, Are There Signs of a Jordanian-Palestinian Reengagement?, Jerusalem Center for Public Affairs, Vol. 5 No. 1, 19 July, 2005, http://www.jcpa.org/brief/brief005-1.htm; Ashton N., King Hussein of Jordan: Political Life, Yale University Press, New Haven and London, 2010; Мелкумян Е. С., Выступление иорданского короля на саммите ЛАГ, www.iimes.ru; Абилов К. А., Позиция Иордании по вопросу правового статуса палестинцев, Востоковедный зборник, выпуск 8, Москва, 2007.

[13] Щенников В. Ф., Внутриполитечское положение Иордании и ее внешняя политика, Ближний Восток и современниость. Сборник статей. Вынуск 18, Москва, 2003; Никитин А., Основные направления внешней политики и политики безопасности при короле Абдалле II, диссертация, Нижний Новгород, 2009; Sharp Jeremy, Jordan: Background and U.S. Relations, Congressional Research Service, December 2, 2014, http://fpc.state.gov/documents/organization/234976.pdf.

[14] Оганесян Н., Отношения Иракской Республики со странами Арабского Востока, Ереван, 1985. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 4, Երևան, 2007:

[15] Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003:

[16] Կարամանուկյան Շ., Արաբական պետությունների լիգայի դերը արաբական երկրների հակահմպերիալիստական պայքարում, Երևան, 1988:

[17] Հովհաննիսյան Ա., Իսրայելապաղեստինյան խաղաղության գործընթացը 1996-1997թթ.: Հեբրոնի համաձայնագիրը, http://middleorient.com: Նույնի, Խաղաղության գործընթացը Մերձավոր Արևելքում, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2001: Նույնի, Պաղեստինա-իսրայելական հակամարտության լուծման ժամանակակից տարբերակները. սցենարներ և հետևանքներ, Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ, Հանրապետական գիտական նստաշրջան, Նյութերի ժողովածու, 2007:

[18] Վիրաբյան Դ., Հորդանանա-իսրայելյան հարաբերությունները (1948-1994թթ.), ատենախոսություն, Երևան, 2002:

Ոչ պակաս արժեքավոր են նաև հայ հեղինակների՝ Մերձավոր Արևելքում ջրի խնդրի վերաբերյալ կատարած հետազոտությունները, որի ապացույցն են Կ. Հարությունյանի և Ա. Հովհաննիսյանի ուսումնասիրությունները[19]:

Հետազոտությանը մեծապես նպաստել են նաև այն ուսումնասիրությունները, որոնք հեղինակը կատարել է Ռուսաստանի Դաշնության գիտական կենտրոններում և գրադարաններում, մասնավորապես՝ Գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում, Ռուսական պետական գրադարանում, Ռուսաստանի պետական հանրային պատմական գրադարանում:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից (որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար ունի իր ենթաբաժինները), եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ խոսվում է ատենախոսության թեմայի արդիականության, նպատակների ու խնդիրների մասին, հիմնավորվում է աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, տրվում է գրականության և սկզբնաղբյուրների համառոտ տեսությունը, աշխատանքի մեթոդաբանական հիմքն ու գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Հորդանանաիսրայելական հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները (1947–1999 թթ.)»,** մի կողմից նվիրված է Հաշիմյանների և Իսրայելի միջև հարաբերությունների պատմության էվոլյուցիային, մյուս կողմից՝ պաղեստինաիսրայելական հակամարտության սրմանը և երկկողմ հարաբերություններում պաղեստինյան գործոնի ունեցած նշանակությանը:

Առաջին ենթագլխում՝ **«Հորդանանաիսրայելական հարաբերությունների ընդհանուր բնութագիրը մերձավորարևելյան հակամարտության սրման համատեքստում (1947-1991 թթ.)»,** անդրադարձ է կատարվում Հաշիմյանների և սիոնիստների համագործակցության սկզբնավորմանը, նշված ժամանակաշրջանում Հորդանանի և Իսրայելի համագործակցությանը և երկկողմ հարաբերություններում պաղեստինյան գործոնի նշանակությանը, 1948-1949 թթ. և 1967 թ. արաբ-իսրայելական պատերազմներին և դրանցում Հորդանանի մասնակցությանը, 1970-1971 թթ. Հորդանանում «սև սեպտեմբերի» դեպքերին և դրանց ազդեցությանը պաղեստինյան հարցում, 1978 թ. Հուսեյն թագավորի առաջ քաշած պաղեստինահորդանանյան միացյալ պետության գաղափարին և դրա վերաբերյալ իսրայելական արձագանքին:

XX դարի առաջին կեսին սկիզբ առած Հաշիմյան ընտանիքի անդամների շփումները սիոնիստական գործիչների հետ հիմք դրեցին շուրջ կես դար շարունակվող հորդանանաիսրայելյան գաղտնի հարաբերություններին:

---

[19] Հարությունյան Կ., Ջրի հիմնախնդիրը Մերձավոր Արևելքում (1945-2004թթ.), ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2005, 165 էջ: Հովհաննիսյան Ա., Ջրային հակամարտությունը Մերձավոր Արևելքում, Արևելք ժողովածու, Երևան 2001, էջ 85-93: Նույնի, Ջրային ռեսուրսների օգտագործման հարցը Հորդանանի ավազանում, Գյումրու պետական մանկավար ժական ինստիտուտ, Հանրապետական գիտական նստաշրջան, Նյութերի ժողովածու, 2005, էջ 56-62:

Սիոնիստների հետ համագործակցության շնորհիվ Հաշիմյանները ձգտում էին իրենց իշխանության ներքո ստեղծել հզոր արաբական պետություն: 1922 թ. Ազգերի լիգան հավանության արժանացրեց ենթամանդատային Պաղեստինից Անդրհորդանանի էմիրության առանձնացումը: 1946 թ. մարտի 22-ին Մեծ Բրիտանիայի և Աբդալլահ առաջինի միջև ստորագրվեց համաձայնագիր. Աբդալլահի գլխավորությամբ հռչակվեց թագավորություն, որը նույն թվականի մայիսին վերանվանվեց Հորդանանի Հաշիմյան Թագավորության: Աբդալլահ առաջին թագավորի և սիոնիստների շահերի համընկնումը 1947 թ. Իսրայել Պետության կազմավորման, ինչպես նաև 1948-1949 թթ. արաբաիսրայելյան առաջին պատերազմի նախօրեին երկու կողմերին հնարավորություն տվեց հասնել փոխշահավետ գաղտնի համաձայնությունների: Արդյունքում, Հորդանանը զգալիորեն ընդլայնեց իր տիրույթները Պաղեստինում արաբական պետության համար նախատեսվող տարածքների հաշվին: Իր հերթին, Իսրայելը, ի դեմս Աբդալլահ թագավորի, հուսալի դաշնակից ունեցավ և հնարավորություն ստացավ խոչընդոտել անկախ Պաղեստինի կայացմանը: 1948–1949 թթ արաբաիսրայելական պատերազմից հետո, խաղարկելով Իսրայելի հետ չհարձակման համաձայնագրի կնքման հարցը, Աբդալլահը հասավ արաբական աշխարհի կողմից պաղեստինյան տարածքների թեկուզև ժամանակավոր բռնակցման ճանաչմանը: Հորդանանի կողմից բռնակցված տարածքներում պաղեստինցիներին հաշիմյան հպատակություն տրամադրելու մասին որոշումը մեծապես օգնեց իսրայելյան կողմին՝ պաղեստինյան խնդիրը միջազգային ատյաններում զուտ որպես փախստականների հարց ներկայացնելուն: 1953 թ. սեպտեմբերի 3-ին Աբդալլահին փոխարինած երիտասարդ Հուսեյն թագավորի վարչակարգը հրաժարվեց հավակնոտ «Մեծ Սիրիա» ստեղծելու Աբդալլահ թագավորի ծրագրից և իր ջանքներն ուղղեց Հորդանանում Հաշիմյան վարչակարգի պահպանմանն ու Իսրայելի հետ շահավետ համագործակցության հաստատմանը՝ կարգավորելով թե՛ ներքաղաքական, թե՛ արտաքին քաղաքական դժվարությունները: 1967 թ. արաբաիսրայելական պատերազմի ընթացքում, երբ Իսրայելը գրավեց Սինայի թերակղզին և Գազայի հատվածը, Հորդանան գետի արևմտյան ափը, Գոլանի բարձունքներն ու Արևելյան Երուսաղեմը, Հորդանանի կրած վնասն առավել հաստատակամ դարձրեց Հուսեյն թագավորի ձգտումը՝ Իսրայելի հետ վարել ուրույն, արաբական այլ երկրների հետ երբեմն խոր հակասությունների բերող քաղաքականություն: Մասնակցելով վեցօրյա պատերազմին՝ Հորդանանը կորցրեց Աբդալլահ թագավորի օրոք Պաղեստինում ունեցած բոլոր ձեռքբերումները և դարձավ պաղեստինցի փախստականներ հյուրընկալող ամենամեծ պետությունը: 1970-1971 թթ. Հորդանանում արյունալի բախումներ տեղի ունեցան հաշիմյան բանակի և պաղեստինյան զինված խմբավորումների միջև (վերջիններս Հորդանանում դարձել էին «պետություն պետության մեջ» և լրջորեն սպառնում էին այդ երկրի ինքնիշխանությանը): Հորդանանա-պաղեստինյան բախումների հետևանքով Հորդանանում առաջացած ներքաղաքական և տնտեսական խոր ճգնաժամը հաղթահարելու և Հաշիմյան վարչակարգը պաղեստինյան ազատագրական շարժման հետ հաշտեցնելու նպատակով՝ Հուսեյն թագավորը 1972 թ. առաջ քաշեց հորդանանա-պաղեստինյան միացյալ պետության գաղափարը:

Իսրայելը և միջազգային հանրությունը Հորդանանը սկսեցին ընկալել որպես պաղեստինյան հարցի լուծման հարմար տարբերակ՝ որակելով որպես պաղեստինցիների «այլընտրանքային հայրենիք»: 1978 թ. եգիպտաիսրայելական խաղաղության համաձայնագրից հետո, հասկանալով արաբական երկրների դիրքորոշման անտեսմամբ Իսրայելի հետ հարաբերություններ վարելու վտանգը, Հորդանանի Հուսեյն թագավորը 1980-ականների վերջից հրաժարվեց պաղեստինյան տարածքների հանդեպ հավակնություններից և իր իշխանության ներքո հորդանանա-պաղեստինյան միացյալ պետության հռչակման գաղափարից, ինչի արդյունքում հորդանանաիսրայելյան հարաբերություններում սկսվեց որակական մի նոր փուլ:

Երկրորդ ենթագլխում՝ **«Հորդանանա-պաղեստինյան միացյալ պետության գաղափարը՝ որպես պաղեստինյան հարցի կարգավորման տարբերակ»,** քննարկվում են 1970-ականների սկզբին Հուսեյն թագավորի կողմից առաջ քաշված հորդանանա-պաղեստինյան միացյալ պետության հայեցակարգն ու դրա միջազգային արձագանքները: Լուսաբանվում է այդ գաղափարի սկզբնավորման պատմությունը, հետագա զարգացումը, դրա վերաբերյալ Իսրայելում և Պաղեստինում գոյություն ունեցող մոտեցումներն ու դիրքորոշումները:

Որպես պաղեստինյան խնդրի կարգավորման հնարավոր տարբերակ միացյալ պետության գաղափարն առաջ էր քաշվել դեռևս 1936 թ. ենթամանդատային Պաղեստինում բրիտանական գաղութային իշխանությունների կողմից և հետագա տարիներին արծարծվել տարբեր ձևաչափերով ընդհուպ մինչև 1972 թ., երբ մարտի 15-ին պաշտոնապես հայտարարվեց Հուսեյն թագավորի կողմից՝ ստանալով հայեցակարգային բնույթ: Առաջարկվող բանաձևը 12 հիմնարար դրույթներ ուներ: Ըստ այդմ՝ Հորդանանի Հաշիմյան Թագավորությունը վերանվանվելու էր Միացյալ Արաբական Թագավորություն, որը կազմված էր լինելու պաղեստինյան շրջանից (բաղկացած Արևմտյան ափից, որը մինչև 1948-1949 թթ. և 1967 թ. եղել է Հորդանանի կազմում, ու որևէ այլ պաղեստինյան տարածքից, որոնց բնակչությունն ազատագրումից հետո ցանկություն կհայտներ միանալու միացյալ թագավորությանը) և հորդանանյան շրջանից, որը կազմված է Արևելյան ափից: Ամմանը լինելու էր թագավորության կենտրոնական մայրաքաղաքը, ինչպես նաև, միաժամանակ հորդանանյան շրջանի մայրաքաղաքը: Արևելյան Երուսաղեմը պետք է լիներ պաղեստինյան շրջանի մայրաքաղաքը: Պետության ղեկավարը լինելու էր թագավորը, ով կենտրոնական կառավարության հետ համատեղ ստանձնելու էր կենտրոնական գործադիր իշխանությունը: Կենտրոնական օրենսդիր իշխանությունը իրականացնելու էին թագավորը և խորհրդարանը (Ազգային Ժողով), որում երկու շրջանները հավասարապես ներկայացված էին լինելու: Կենտրոնական դատական իշխանությունը ստանձնելու էր կենտրոնական գերագույն դատարանը: Թագավորությունն ունենալու էր միասնական զինված ուժեր, որոնց գերագույն հրամանատարությունը ստանձնելու էր թագավորը: Միացյալ պետության ծրագիրը սուր քննադատության արժանացավ թե՛ Յասեր Արաֆաթի, թե՛ մի շարք արաբական երկրների կողմից: Սակայն ավելի ուշ՝ 1999 թ. Հուսեյն թագավորի մահվանից հետո, Յասեր Արաֆաթը հանդես եկավ հորդանանա-պաղեստինյան համադաշնություն ստեղծելու իր նախագծով, որը պետք է ունենար երկու անջատ կառավարություններ,

իսկ կենտրոնական կառավարության որոշումներն ընդունվեին միաձայն: Մինչդեռ իսրայելական կողմին ձեռնտու տարբերակը հենց դաշնության հռչակումն էր, երբ կվերանար պաղեստինյան ազգային ինքնագիտակցության գաղափարը, իսկ Հորդանանը կգիտակցվեր որպես պաղեստինցիների «այլընտրանքային հայրենիք»: Դրանից հետո, երբ Արևմտյան ափի մեծ մասը կբռնակցվեր Իսրայելին, օրակարգից դուրս կգային նաև հրեական վերաբնակեցումների և պաղեստինցի փախստականների հարցերը, որոնք ինքնաբերաբար կդառնային հորդանանյան հպատակներ: Ի վերջո, 1987 թ. Հուսեյն թագավորը հրաժարվեց դաշնության գաղափարից: Եվ չնայած այն հանգամանքին, որ միացյալ պետության գաղափարը բավականին կենսունակ էր և միջազգային լայն հնչեղություն էր ձեռք բերել, աջակցություն ստացել ԱՄՆ-ում և Արևմուտքում, կյանքի չկոչվեց մի շարք պատճառներով: Հորդանանյան իշխանությունները, նշելով, որ ի սկզբանե դեմ չէին Յասեր Արաֆաթի համադաշնության վերաբերյալ առաջարկին, այդուհանդերձ մերժեցին այն: Իրականում, Հորդանանի և Պաղեստինի միասնությունը հնարավոր էր միայն դաշնային հարաբերությունների հաստատման միջոցով, երբ միավորվելու էին անկախ թագավորությունը և ինքնորոշումից զուրկ ինքնավարությունը՝ պաղեստինյան իշխանությունները, որոնք ունենալու էին մեկ կառավարություն և կենտրոնական իշխանություններ: Բացի այդ, Հուսեյն թագավորը մտավախություն ունեցավ, որ պաղեստինցիների թվաքանակի հետագա աճը Հորդանանում կարող էր անցանկալի հետևանքներ ունենալ Հաշիմյան վարչակարգի համար:

Երրորդ ենթագլխում՝ **«1994 թ. հորդանանիսրայելական խաղաղության համաձայնագիրը՝ որպես քեմփդևիդյան գործընթացի շարունակություն»,** հանգամանորեն լուսաբանվում է 1994 թ. Հորդանանի և Իսրայելի միջև կնքված խաղաղության համաձայնագիրը և դրա ունեցած նշանակությունն ինչպես երկկողմ հարաբերությունների, այնպես էլ պաղեստինյան հարցի զարգացման գործում:

1994 թ. հոկտեմբերի 26-ին Վադի Արաբայում Հուսեյն թագավորի, Իսրայելի վարչապետ Իցհակ Ռաբինի, ԱՄՆ նախագահ Բիլ Քլինտոնի, Իսրայելի նախագահ Էզեր Վեյցմանի և այլ բազմաթիվ պաշտոնյաների մասնակցությամբ տեղի ունեցավ հորդանանահիսրայելյան խաղաղության համաձայնագրի ստորագրումը: Դրան հետևեց 15 համաձայնագրերի կնքում, որոնցում հստակեցվում էին մի շարք դրույթներ. ավարտվում էր երկու երկրների միջև պատերազմական դրությունը, որոնվում էին լիակատար խաղաղությանը միտված ուղիներ՝ հիմնված ՄԱԿ-ի 242 և 338 բանաձևերում ամփոփված «հող՝ խաղաղության դիմաց» սկզբունքի հիման վրա: Իսրայելը ճանաչում էր Հաշիմյան Թագավորության հատուկ դերը Երուսաղեմի մուսուլմանական սրբատեղիների նկատմամբ: Համաձայնագրով ապահովվեց Իսրայելի կողմից գրավված հորդանանյան տարածքների վերադարձը Հորդանանին: Համաձայնագրով ամրագրվեց նաև, որ Հորդանանը կստանար իր ջրաբաժինը Յարմուք և Հորդանան գետերից: Մեծ կարևորություն տալով անվտանգությանը՝ յուրաքանչյուր կողմ պարտավորվեց լուծել տարաձայնությունները խաղաղ ճանապարհով:

1994 թ. հորդանանահիսրայելյան խաղաղության համաձայնագրի կետերը և հավելվածները ներառում էին երկու երկրների միջև հարաբերությունների այնպիսի ոլորտներ, ինչպիսիք էին՝ առևտրական, գիտական, մշակութային,

հեռահաղորդակցական՝ կապի և փոխադրումների, նավագնացության, զբոսաշրջիկության, բնապահպանության, էներգետիկայի և գյուղատնտեսության: Համաձայնագրի կարևորագույն կետերից մեկը թերևս վերաբերում էր Հորդանանում Իսրայելի գրաված տարածքներին: 1968-70 թթ. ընկած ժամանակահատվածում Իսրայելը Մեռյալ ծովից դեպի հարավ գտնվող Վադի Արաբայում գրավել էր 344 կմ^2, իսկ Բակուրայի շրջանի հյուսիսում՝ 820 կմ^2 հորդանանյան տարածքներ: 1994 թ. համաձայնագրով այս տարածքները վերադարձվում էին Հորդանանին: Հորդանանը և Իսրայելը պարտավորվեցին ամենակարևոր՝ անվտանգության հարցերին առնչվող իրենց հարաբերությունները կառուցել փոխադարձ վստահության, համագործակցության և շահերի պաշտպանության հիման վրա՝ նպաստելով տարածաշրջանում խաղաղության հաստատմանը: Համաձայնագրում անվտանգությանն առնչվող կետերից թերևս կարևորագույնն Իսրայելի կողմից Հորդանանի Հաշիմյան թագավորությունն անկախ և իրավական պետություն ճանաչելու փաստն էր: Փաստորեն հստակ սահմաններ դնելով Հորդանանի արևմտյան մասի համար՝ համաձայնագիրը մեկընդմիշտ վերջ էր դնում սիոնիստական ծայրահեղական այն տեսակետին, որ Հորդանանը Պաղեստին է և «այլընտրանքային հայրենիք» պաղեստինցի արաբների համար: Խաղաղության համաձայնագրի 9–րդ հոդվածի 2-րդ պարբերությունը սահմանում էր, որ «Իսրայելը ճանաչում է Հորդանանի Հաշիմյան Թագավորության ներկայիս հատուկ դերը Երուսաղեմի իսլամական սրբավայրերի նկատմամբ»:

Չորրորդ ենթագլխում՝ **«Հորդանանահիսրայելական հարաբերությունների վայրիվերումները (1994-1999 թթ.)»,** անդրադարձ է կատարվել հորդանանահիսրայելական հարաբերությունների առանձնահատկություններին 1994-1999 թթ. ժամանակաշրջանում և դրանցում առկա վայրիվերումներին:

1994 թ. հորդանանահիսրայելական խաղաղության համաձայնագրի ստորագրմանը հաջորդած մոտ երկու տարիները (1994 թ. հոկտեմբերից մինչև 1996 թ. մայիս) կարելի է համարել երկու երկրների միջև հարաբերությունների «մեղրամիս», որի ձևավորմանը նպաստում էին մի քանի գործոններ. 1.Նախ, Իսրայելում գտնում էին, որ Հորդանանի հետ խաղաղության հաստատումը կարող էր բարենպաստ ազդեցություն ունենալ մերձավորարևելյան հակամարտության համապարփակ կարգավորման գործընթացի վրա, ինչպես նաև կօգներ արաբական աշխարհի հետ հարաբերությունների բարելավմանն ընդհանրապես: Բացի այդ, իսրայելցիները ցանկություն ունեին առանց արգելքների հանգստանալ Հորդանանում, որտեղ գներն ավելի մատչելի էին, քան Իսրայելում: Կարևոր էր նաև տնտեսության տարբեր ոլորտներում համագործակցության հնարավորությունը: Խոսվում էր համատեղ ձեռնարկություններ բացելու մասին, որոնցում օգտագործվելու էր հորդանանյան համեմատաբար ավելի էժան աշխատուժը: 2. Հորդանանի թագավոր Հուսեյնի և Իսրայելի նախագահ Խ. Վեյցմանի ու վարչապետ Ի. Ռաբինի միջև առկա էր կառուցողական երկխոսություն, որը հիմնված էր փոխադարձ վստահության և հարգանքի վրա: Իսրայելցիների շրջանում Հուսեյն թագավորի անձը վստահություն էր ներշնչում և երաշխիք էր առ այն, որ երկկողմ պայմանավորվածությունները կյանքի կկոչվեին: 3. Կարևոր էր նաև ի ցույց դնել ԱՄՆ–ին, որ հորդանանահիսրայելյան խաղաղությունը կարող էր գոյություն ունենալ,

քանի որ ԱՄՆ-ը ոչ միայն զգալի ջանքեր էր ներդրել խաղաղության հաստատման գործում, այլ նաև խոստացել էր զգալի ֆինանսական օժանդակություն հատկապես հորդանանյան կողմին:

Մերձավորարևելյան հակամարտության խաղաղ կարգավորման գործում զգալի ներդրում ունեցած Իցհակ Ռաբինի սպանությունը 1995 թ. նոյեմբերին (իսրայելցի արմատականի կողմից, ով դեմ էր արաբների հետ խաղաղության հաստատմանը) իր բացասական ազդեցությունն ունեցավ նաև հորդանանաիսրայելական հարաբերությունների հետագա զարգացման վրա: Ռաբինի սպանությունը կանխորոշեց երկու երկրների միջև «մեղրամիսի» ավարտը: 1996 թ. գարնանն Իսրայելում ընտրություններում հաղթանակ տարավ Լիկուդ կուսակցությունն, ու երկրի վարչապետ դարձավ Բենիամին Նաթանյահուն, ով աչքի էր ընկնում պաղեստինաիսրայելյան հակամարտության նկատմամբ իր կոշտ դիրքորոշմամբ: Այս հանգամանքը ևս իր բացասական հետևանքներն ունեցավ երկու երկրների միջև հարաբերություններում: Բ.Նաթանյահուն հայտարարեց, որ պատրաստվում էր ընդլայնել Հորդանան գետի Արևմտյան ափում և Գազայի հատվածում իսրայելական բնակավայրերը, ապա երկու երկրների հարաբերություններում հակասությունները սրվեցին այն բանից հետո, երբ հայտնի դարձավ, որ իսրայելյան կառավարությունը որոշում էր ընդունել Երուսաղեմի իսլամական սրբավայրերի շրջանում՝ մասնավորապես Տաճարի լեռան միջով ստորգետնյա թունել փորելու մասին: Այս վերջին հանգամանքն անձնապես վիրավորեց Հուսեյն թագավորին, քանի որ հորդանանաիսրայելական խաղաղության համաձայնագրի համաձայն, նրա հովանավորության տակ էր անցել Երուսաղեմի իսլամական սրբավայրերի խնամակալությունը: Նախքան այդ քայլին դիմելն իսրայելյան կառավարությունը պարտավոր էր տեղյակ պահել թագավորին: Հորդանանաիսրայելական հարաբերություններին հաջորդ լուրջ վնասը հասցվեց 1997 թ. սեպտեմբերին, երբ Ամմանում Իսրայելի հատուկ ծառայություններն անհաջող մահափորձ իրականացրեցին Համաս կազմակերպության քաղբյուրոյի նախագահ Խալիդ Մաշալի նկատմամբ, ով Հորդանանի քաղաքացի էր: Հուսեյն թագավորը հետագայում հմտորեն օգտագործեց այս փաստն իսրայելական իշխանությունների նկատմամբ որոշակի ճնշումներ իրականացնելու նպատակով, որի ապացույցը դարձավ Համասի հոգևոր առաջնորդ շեյխ Ահմադ Յասինին իսրայելական բանտից ազատելը: Թեև Լիկուդ կուսակցության և Բենիամին Նաթանյահուի կառավարման շրջանում (1996-1999 թթ.) հորդանանաիսրայելական հարաբերություններում նկատելի էր լարվածություն, սակայն երկու կողմերն էլ փորձում էին պահպանել դժվարությամբ ձեռք բերված խաղաղությունն ու տարբեր ոլորտներում հաստատված համագործակցությունը՝ դրանք չպայմանավորելով անձանց ու նրանց վարած քաղաքական ուղեգծով:

Երկրորդ գլուխը՝ **«Հորդանանաիսրայելական հարաբերությունները և պաղեստինյան հարցը Աբդալլահ II-ի կառավարման շրջանում (1999-2014)»,** նվիրված է պաղեստինյան խնդրի նկատմամբ Հորդանանի դիրքորոշմանը և Իսրայելի հետ հարաբերությունների ուսումնասիրությանը Աբդալլահ երկրորդ թագավորի կառավարման (1999-2014 թթ.) շրջանում: Լուսաբանվում են մերձավորարևելյան հակամարտության խաղաղ կարգավորման հարցում

Հորդանանի ջանքերը, Իսրայելի հետ հարաբերությունները, շեշտադրվում է պաղեստինաիսրայելական հակամարտության հարցը: Հատուկ անդրադարձ է կատարվել նշված ժամանակաշրջանում պաղեստինաիսրայելական հակամարտությանը նվիրված բոլոր միջազգային գագաթաժողովներին:

Առաջին ենթագլխում՝ **«Հորդանանի մոտեցումները պաղեստինյան իրողությունների նկատմամբ և հարաբերությունները Իսրայելի հետ (1999-2001 թթ.)»,** լուսաբանվում են պաղեստինյան խնդրի վերաբերյալ Աբդալլահ թագավորի մոտեցումները, ինչպես նաև Հորդանանի արտաքին քաղաքականության պաղեստինյան և իսրայելական ուղղությունների առանձնահատկությունները:

Աբդալլահ երկրորդ թագավորը, ով իշխանության եկավ 1999 թ. փետրվարին հոր՝ Հուսեյն թագավորի մահից հետո և մինչ օրս ղեկավարում է Հորդանանը, հստակեցրեց Հորդանանի ներքին և արտաքին քաղաքականության առաջնահերթությունները: Աբդալլահ երկրորդը վերստին սահմանեց Հորդանանի դիրքորոշումը պաղեստինյան հարցի նկատմամբ: Ըստ այդմ՝ հակամարտությունը պետք է կարգավորվեր խաղաղ ճանապարհով՝ երկու պետություն երկու ժողովրդի համար (two state solution) սկզբունքով, փախստականների հարցը պետք է արդար լուծում ստանար, կողմերը պետք է հետևեին միջազգային պայմանավորվածություններին ու պայմանագրերին: 1999 թ. մայիսին Իսրայելում Ավոդա կուսակցության հաղթանակից և էհուդ Բարաքի վարչապետ դառնալուց հետո Աբդալլահ երկրորդը հայտարարեց Իսրայելի վարչապետի և նրա կառավարության հետ համագործակցելու մտադրության մասին, որպեսզի հնարավոր լիներ վերսկսել խաղաղության գործընթացը: Իսրայելի հետ համագործակցությանն ընդառաջ գնալով՝ 1999 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին հորդանանյան ղեկավարությունը կասեցրեց պաղեստինյան Համաս շարժման մասնաճյուղի գործունեությունը Հորդանանում և արտաքսեց Քաղբյուրոյի նախագահ Խալիդ Մաշալին: 2000 թ. ապրիլի 23-ին Աբդալլահ երկրորդն առաջին անգամ այցելեց Իսրայել՝ Էյլաթում հանդիպելով Էհուդ Բարաքին և նրա հետ քննարկելով հորդանանաիսրայելական հարաբերությունների և պաղեստինաիսրայելական բանակցությունների հետ կապված հարցեր: Աբդալլահ երկրորդը խուսափեց Թել-Ավիվ և Երուսաղեմ այցից: 2000 թ. հուլիսի 11-25-ը ԱՄՆ-ում տեղի ունեցած քեմփդևիդյան գագաթաժողովից առաջ Հորդանանն ակտիվացրեց իր մերձավորարևելյան քաղաքականությունը: Գագաթաժողովը, որից սպասելիքները մեծ էին, այդպես էլ ավարտվեց առանց որևէ արդյունքի: Խնդրի կարգավորման փակուղում հայտնվելը նպաստեց 2000 թ. սեպտեմբերի վերջին պաղեստինյան երկրորդ ինթիֆադայի սկսմանը, որն իր արձագանքները գտավ նաև հորդանանյան հասարակության շրջանում՝ առաջին պլան մղելով պաղեստինյան հարցը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Հորդանանը պաղեստինյան խնդրի խաղաղ կարգավորման նախաձեռնություններում (2001-2005թթ.)»,** անդրադարձ է կատարվում պաղեստինաիսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման Հորդանանի և Եգիպտոսի առաջ քաշած ծրագրին (2001թ.), արաբական խաղաղ նախաձեռնությանը (2002թ.), ճանապարհային քարտեզին (2003 թ.), ժնևյան համաձայնագրին (2003թ.) և դրանց նկատմամբ Հորդանանի մոտեցումներին,

Հորդանանի դերակատարությանը 2003 թ. հունիսին արաբ-ամերիկյան երկու գագաթաժողովներին Շարմ Ալ-Շեյխում և Աքաբայում, ինչպես նաև 2005 թ. սեպտեմբերին Իսրայելի սահմանազատման ծրագրին:

Երկրորդ ինթիֆադայի արդյունքում ստեղծված ճգնաժամը հաղթահարելու, ինչպես նաև պաղեստինյան խնդրին միջազգային հնչեղություն տալու նպատակով Հորդանանը և Եգիպտոսն առաջ քաշեցին պաղեստինահիսրայելական խաղաղ գործընթացի վերսկսման և հակամարտության խաղաղ կարգավորման ծրագիր, որը նպատակ ուներ հաղթահարել ինթիֆադայի հետևանքով Պաղեստինի Ինքնավարության և Իսրայելի միջև ստեղծված ճգնաժամը և կողմերին վերադարձնել մինչև այդ գոյություն ունեցող իրավիճակը: Կողմերի միջև խաղաղ բանակցությունները վերսկսելու և գործընթացն առաջ տանելու համար շատ խրթին ու կնճռոտ հարցեր կային, որոնցից մեկը հրեական շինարարություններն ու վերաբնակեցումներն էին Արևմտյան ափին և Արևելյան Երուսաղեմում: Հորդանանի առաջնորդը կոշտ կերպով քննադատում էր վերաբնակեցման հարցում Իսրայելի քաղաքականությունը, իսկ պաղեստինցիներն այն համարում էին Իսրայելի հետ բանակցությունները վերսկսելու նախապայման:

Հորդանանը հավանության արժանացրեց թե՛ 2002 թ. մարտի վերջին Արաբական պետությունների լիգայի առաջ քաշած արաբական խաղաղ նախաձեռնության ծրագիրը, թե՛ 2003 թ. «միջազգային քառյակի» Ճանապարհային քարտեզը: Եգիպտոսն ու Հորդանանը, համագործակցելով ԱՄՆ-ի հետ, 2003 թ. հունիսին կազմակերպեցին Շարմ Ալ-Շեյխի և Աքաբայի գագաթաժողովները՝ Ճանապարհային քարտեզն իրականություն դարձնելու նպատակով: Հորդանանը դրականորեն արձագանքեց նաև 2003 թ. դեկտեմբերի 1-ին Իսրայելի և ՊԱԿ-ի միջև կնքված 50 էջանոց, բավական հավասարակշռված մի փաստաթղթի՝ ժնևյան համաձայնագրին: Նշված բոլոր փաստաթղթերն ու համաձայնագրերը նախատեսում էին անկախ Պաղեստին պետության ստեղծում Արևմտյան ափին և Գազայի հատվածում: Հակամարտության կարգավորման ուղղությամբ Իսրայելի կողմից նշանակալից տեղաշարժ արձանագրվեց 2005 թ.-ին, երբ Արիել Շարոնի կառավարությունը միակողմանի սահմանազատման արդյունքում դուրս բերեց զորքերը Գազայից, ինչը Հորդանանի առաջնորդը որակեց որպես խրախուսելի քայլ: Պաղեստինահիսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման մեջ ներգրավված միջազգային շրջանակներում Հորդանանն առանձնանում էր թե՛ պաղեստինցիների, թե՛ իսրայելցիների համար որպես ազդեցիկ կողմ: Բացի այդ, ԱՄՆ-ը շարունակում էր ծանրակշիռ տեղ տալ Հորդանանին՝ որպես տարածաշրջանային կարևորագույն դաշնակցի և «միջազգային քառյակի» հետ ակտիվորեն համագործակցող պետության:

Երրորդ ենթագլխում՝ **«Համասը հորդանանահիսրայելական հարաբերությունների համատեքստում»,** լուսաբանվում է 2006 թ. հունվարին Պաղեստինի Ինքնավարությունում խորհրդարանական ընտրությունների արդյունքում Համասի հաղթանակը և Համաս շարժման վերաբերյալ Հորդանանի դիրքորոշման էվոլյուցիան:

2006 թ. Պաղեստինի Ինքնավարությունում անցկացված երկրորդ խորհրդարանական ընտրությունների արդյունքում ՊԱԿ-ի նկատմամբ հաղթանակ

տարավ Համասը, որը չէր ճանաչում Իսրայել պետությունը և համարում էր, որ պաղեստինյան դիմադրությունն օրինական է այնքան ժամանակ, քանի դեռ Իսրայելը շարունակում է գրավված պահել պաղեստինյան տարածքները: Համասի հաղթանակը մտահոգություն առաջ բերեց Իսրայելում և Արևմուտքում, որտեղ այն համարվում էր ահաբեկչական կազմակերպություն: Համասի՝ իշխանություն դառնալուց հետո Հաշիմյան առաջնորդը, որը 1999 թ. փակել էր շարժման ներկայացուցչությունը, որոշակիորեն չեզոք դիրքորոշում որդեգրեց և «միջազգային քաղաքակին» կոչ արեց հնարավորություն տալ Համասին՝ ներկայացնելու իր ծրագիրը արդեն որպես իշխանության մեջ գործող քաղաքական ուժ: Հետագա տարիներին, չնայած ՊԱԿ-ի և Համասի միջև գոյություն ունեցող երկփեղկվածությանը և Իսրայելի հարցում Համասի արմատական մոտեցմանը, Աբդալլահ երկրորդը զերծ մնաց Համասին քննադատելուց՝ համարելով, որ խաղաղ կարգավորման հնարավորության բացակայությունը միշտ էլ ծնում է բռնություն: Հորդանանը քննադատեց Գազայում 2008-2009 թթ. և 2012 թ. խաղաղ բնակչության դեմ Իսրայելի ռազմական գործողությունները: Հորդանանի և Համասի հարաբերությունների ջերմացումն ավելի ակնհայտ դարձավ, երբ 2012թ. երկու անգամ Համասի քաղբյուրոյի նախագահ Խալիդ Մաշալն այցելեց Հորդանան և ջերմ ընդունելության արժանացավ Աբդալլահ երկրորդի կողմից: Հորդանան-Համաս ձնհալից հետո Համասը պարտավորվում էր չմիջամտել Հորդանանի ներքին և արտաքին գործերին՝ կարևոր համարելով Հորդանանի անվտանգությունն ու կայունությունը: Համասին աջակցելով՝ Հորդանանի իշխանությունները լրացուցիչ կռվան էին ձեռք բերում Իսրայելի հետ հարաբերություններում, նաև հնարավորություն ունենում ներազդել ներպաղեստինյան գործընթացների վրա՝ միևնույն ժամանակ զգուշանալով սեփական երկրում Համասի դիրքերի ամրապնդումից: Պատահական չէ, որ Հորդանանը 2012 թ.-ին մերժեց Քաթարի առաջարկը՝ Հորդանանում վերաբացելու Համասի գրասենյակը և Խ. Մաշալին վերադարձնելու Ամման՝ Հորդանանի տնտեսության մեջ հսկայածավալ ներդրումներ անելու դիմաց:

Չորրորդ ենթագլխում՝ **«Պաղեստինյան խնդիրը և Հորդանանը (2007-2010 թթ.)»,** անդրադարձ է կատարվում արաբական խաղաղ նախաձեռնության ծրագրին, դրա վերաբերյալ Հորդանանի մոտեցումներին, 2007 թ. նոյեմբերին Անապոլիսի և 2010 թ. սեպտեմբերին Վաշինգտոնի գագաթաժողովներին և դրանցում Հորդանանի դերակատարությանը:

2007 թ. մարտին ԱՊԼ-ն Էռ-Ռիադի գագաթաժողովում վերահաստատեց արաբական խաղաղ նախաձեռնության ծրագիրը, որը դարձավ համաարաբական և համաիսլամական հայեցակարգ: Արաբական աշխարհի բոլոր երկրները, այդ թվում՝ Հորդանանը, պաղեստինաիսրայելական հակամարտության կարգավորումը պատկերացնում էին արաբական խաղաղ նախաձեռնության շրջանակներում, համաձայն որի՝ Իսրայելը պետք է դուրս գար արաբական բոլոր գրավյալ տարածքներից, իսկ պաղեստինյան հողերի վրա ստեղծվեր անկախ Պաղեստին պետություն Երուսաղեմ մայրաքաղաքով, որի դիմաց արաբական երկրները ճանաչելու էին Իսրայելի անկախությունը: Իսրայելը ստանալու էր հավաքական անվտանգության երաշխիքներ արաբական բոլոր երկրներից: Հակամարտության կարգավորմանն ուղղված ԱՄՆ-ի նախաձեռնած գագաթաժողովների (2007 թ.

Անապոլիս և 2010թ. Վաշինգտոն) կազմակերպման և հակամարտ կողմերին բանակցությունների սեղանին նստեցնելու հարցում Հորդանանը զգալի դերակատարություն ունեցավ: Չնայած միջազգային, այդ թվում՝ Ամմանի ջանքերին, հակամարտության խաղաղ կարգավորման հարցում որևէ շոշափելի արդյունք չարձանագրվեց: Չարդարացան նաև այն սպասելիքները, որն ուներ Հորդանանը 2009 թ. Բարաք Օբամայի իշխանության գալուց հետո: Հորդանանը մեղադրում էր Իսրայելին՝ հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացն առաջ չտանելու և խոչընդոտներ ստեղծելու մեջ:

Հինգերորդ ենթագլխում՝ **«Հորդանանաիսրայելական հարաբերությունները և պաղեստինյան հարցը «արաբական գարնան» համատեքստում (2011-2014 թթ.)»,** անդրադարձ է կատարվում «արաբական գարնան» և դրան հաջորդած դեպքերի ազդեցությանը Հորդանանի և Իսրայելի հարաբերություններում, ինչպես նաև պաղեստինյան հակամարտությանը, 2011 թ. խաղաղության նախաձեռնության Իսրայելի ծրագրին:

2011 թ.-ից «արաբական գարնան» շրջանակներում արաբական աշխարհում սկիզբ առած ըմբոստություններն ու դժգոհությունները թեև ուղղված էին ներքին դաշտին, սակայն նաև արտաքին քաղաքական ուղղվածություն ունեին: Պատահական չէ, որ արաբական-իսլամական հասարակություններում նոր թափ ստացան հակաիսրայելական, հակասիոնիստական և հակաարևմտյան տրամադրությունները: Այդ գործընթացները դրսևորվեցին նաև այն երկրներում, որոնք Իսրայելի հետ խաղաղության համաձայնագրեր էին կնքել, այդ թվում՝ Եգիպտոսում և Հորդանանում: «Արաբական գարնանը» հաջորդած աշխարհաքաղաքական վայրիվերումները՝ մասնավորապես սիրիական պատերազմը, իսկ ավելի ուշ՝ «Իսլամական պետության» ի հայտ գալը, իսկ դրանից առաջ՝ իրաքյան ճգնաժամն ու Իրանի միջուկային ծրագիրը, էականորեն փոխեցին առաջնահերթությունների հարցը Միջին Արևելքում՝ ինչ որ իմաստով ստվերում թողնելով պաղեստինյան խնդիրը: Մինչդեռ, Հորդանանի առաջնորդը համարում էր, որ պաղեստինյան հարցը պետք է առաջնահերթություն ունենա մերձավորարևելյան մնացած հարցերի նկատմամբ: Աբդալլահ երկրորդի կարծիքով՝ պաղեստինյան հարցի կարգավորումը էականորեն կնպաստեր տարածաշրջանի բարգավաճմանը, կայունության և անվտանգության ամրապնդմանը:

«Արաբական գարնան» դեպքերից հետո հորդանանաիսրայելական հարաբերություններում նկատված ամենալարված շրջաններից մեկը կապված էր 2014 թ. Ալ-Ակսայի ճգնաժամի հետ, երբ Իսրայելի ոստիկանությունը հոկտեմբերի 30-ին, անվտանգության նկատառումներից ելնելով, փակեց Ալ-Ակսա մզկիթի մուտքը մուսուլման հավատացյալների առաջ: Հորդանանը, համարելով, որ Երուսաղեմն այն կարմիր գիծն է, որն Իսրայելը չպետք է անցնի, Իսրայելից հետ կանչեց իր դեսպանին: Հորդանանի դեսպանը Իսրայել վերադարձավ 2015 թ. սկզբներին:

Երրորդ գլխում՝ **«Ջրի խնդիրը և հորդանանաիսրայելական համագործակցության շրջանակները»,** ընդհանուր անդրադարձ է կատարվում երկկողմ հարաբերություններում առկա ջրի գործոնին, առևտրատնտեսական հարաբերություններին և համագործակցության այլևայլ ոլորտներին:

Առաջին ենթագլխում՝ **«Ջրի խնդիրը հորդանանաիսրայելական հարաբերություններում 20-րդ դարի երկրորդ կեսին և 21-րդ դարի սկզբին»,** լուսաբանվում են 1994 թ. Խաղաղության համաձայնագրով ջրային խնդիրներին վերաբերող դրույթներն ու հետագա պայմանավորվածությունները:

Ջրի շուրջ վեճերը Իսրայելի և հարևան արաբական երկրների, այդ թվում Հորդանանի հետ սկիզբ են առել Իսրայել պետության հռչակումից ի վեր՝ ջրի գործոնը դարձնելով ռազմավարական և դիվանագիտական խնդիր: Իսրայելի և Հորդանանի ջրերի ընդհանուր սպառման ավելի քան 1/3-ը ապահովում են Հորդանան և Յարմուք գետերը, որի շուրջ լուրջ հակասություններ են եղել: Հորդանանի և Իսրայելի միջև ջրային հարցերը կարգավորելու ամենալուրջ քայլերն արվել են 1994 թ. Խաղաղության համաձայնագրի կնքմամբ, որի հավելված 2-րդը նախատեսում էր Հորդանանի ջրային պաշարների ավելացում՝ տարեկան 215 մլն մ^3-ով: Մինչ այդ այս քանակը կազմում էր Հորդանանի ջրային պաշարների մոտ 30%-ը: 1995 թ. նոյեմբերի 10-ից նախատեսվեց Հորդանան և Յարմուք գետերից տարեկան ևս 50 մլն մ^3 ջրի սպառում Հորդանանի կողմից: Երկու կողմերն իրավունք էին ստանում օգտագործելու ջրային պաշարները հավասարության սկզբունքով:

Երկրորդ ենթագլխում՝ **«Հորդանանի և Իսրայելի համագործակցության շրջանակները 1994-2014 թթ.»,** ընդհանուր անդրադարձ է կատարվում Հորդանանի և Իսրայելի միջև հարաբերություններին առևտրի, առողջապահության, զբոսաշրջության, բնապահպանության, անվտանգության և այլևայլ ոլորտներում: Լուսաբանվում են երկկողմ հարաբերություններում առկա առանձին խնդիրներն ու դրանց պատճառները: Չնայած Հորդանանի և Իսրայելի միջև բազմակողմ համագործակցությանը, դրանք, շատ դեպքերում, չարդարացան: Թեև առկա խնդիրներին՝ արձանագրվեցին համագործակցության լավագույն դրսևորումներ, որոնցից էր՝ Հորդանանի և Իսրայելի միջև 2015 թ. փետրվարի 26-ին Կարմիր ծովից դեպի Մեռյալ ծով ջրանցքի կառուցման մասին համաձայնագիրը, որի մշակման աշխատանքները սկվել էին 2005 թ.-ից:

Եզրակացությունում ի մի են բերված ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները.

- Չնայած այն հանգամանքին, որ հորդանանա-պաղեստինյան միացյալ պետության գաղափարը բավական կենսունակ էր և միջազգային ու տարածաշրջանային լայն արձագանք գտավ, այն չկարողացավ կյանքի կոչվել: 1980-ականների վերջին Հուսեյն թագավորը հրաժարվեց այդ գաղափարից: Ծրագրի ձախողման պատճառները կապված էին դրա նկատմամբ բոլոր կողմերի ունեցած դժգոհությունների հետ: Իր հերթին, Հուսեյն թագավորը մտավախություն ուներ, որ միացյալ պետության ստեղծումը կընդլայներ Հորդանանում պաղեստինցիների ներկայությունն ու նրանց դերակատարումը, ինչն անկանխատեսելի հետևանքներ կարող էր ունենալ Հաշիմյան թագավորության համար:
- 1990–ականներին Հուսեյն թագավորի քաղաքական ուղեգիծը միտված էր վերափոխելու հորդանանյան քաղաքական մտքի վեկտորն արաբականությունից դեպի Արևմուտք: Նոր չափորոշիչներով հասարակության ստեղծումն, ըստ Հուսեյն թագավորի, կարող էր Հորդանանին վերապահել առաջատար դիրքեր արաբական աշխարհում՝ նոր տիպի միջազգային հարաբերությունների պայմաններում:

- 1994 թ. հորդանանաիսրայելյան Խաղաղության համաձայնագրի ստորագրումը պետք է դիտարկել Հուսեյն թագավորի՝ 1990–ականների ներքին և արտաքին քաղաքականության համատեքստում: Վերջինս նպատակադրվել էր ստեղծել քաղաքական ժողովրդավարության և տնտեսական ազատականության հորդանանյան մոդել, որը կարող էր օրինակ ծառայել մյուս արաբական երկրների համար: Այս հանգամանքն, Իսրայելի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման հետ մեկտեղ, Հորդանանին պետք է շնորհեր հատուկ դերակատարում տարածաշրջանում առկա ուժերի նոր հարաբերակցության համատեքստում՝ արաբների և Իսրայելի միջև հնարավոր խաղաղության պայմաններում:
- 1994 թ. Իսրայելի հետ Խաղաղության համաձայնագրի ստորագրումը Հորդանանին հնարավորություն տվեց վերջնականապես ձերբազատվել պաղեստինցիների «այլընտրանքային հայրենիք» լինելու պիտակից: Բացի այդ, ակնհայտ էր համաձայնագրի կնքմանը հետևած ֆինանսական աջակցությունը, երբ ԱՄՆ-ը չեղյալ համարեց 6 մլրդ դոլարի հասնող հորդանանյան պարտքը: Իրենց լուծումը գտան երկու երկրների միջև առկա ջրային հարցերը: Հորդանանը ելք ստացավ դեպի Իսրայելի միջերկրածովյան նավահանգիստներ, իսկ Նեգևի անապատով նաև ճանապարհ ունեցավ դեպի Եգիպտոս:
- Իսրայելի և Հորդանանի միջև կնքված Խաղաղության համաձայնագիրը կարգավորեց նաև երկու երկրների միջև առկա ամենասուր՝ ջրային խնդիրը՝ հնարավորություն տալով միասնաբար տնօրինել ջրային ռեսուրսները: Ջրային վեճերում համաձայնության հասնելը, իսկ հետագայում՝ 2015 թ. փետրվարի 26-ին երկկողմ համաձայնագիրը, որը նախատեսում է Մեռյալ ծովը չորացումից փրկելու նպատակով Կարմիր ծովից դեպի Մեռյալ ծով համատեղ ջանքերով ջրանցքի կառուցում, կարելի է համարել Հորդանանի և Իսրայելի միջև համագործակցության լավագույն դրսևորում:
- Խաղաղության համաձայնագրի ստորագրմամբ և արաբաիսրայելյան հակամարտությունից դուրս գալով՝ Հուսեյն թագավորը ոչ միայն քաղաքական և տնտեսական զգալի ձեռքբերումներ ապահովեց Հորդանանի համար, այլև պատմական և քաղաքական մեծ նշանակություն ունեցող քայլ կատարեց, ինչը միտված էր տարածաշրջանում համընդհանուր խաղաղության և անվտանգության հաստատմանը, ինչպես նաև Մերձավոր Արևելքում միջպետական հարաբերությունների նոր որակի զարգացմանը: Իսրայելի հետ խաղաղություն կնքելով և դիվանագիտական հարաբերություններ հաստատելով՝ Հուսեյն թագավորը ի ցույց դրեց, որ նաև այդ ճանապարհով կարելի է պայքարել Իսրայելի ագրեսիվ քաղաքականության դեմ ու նպաստել տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ու միջպետական հարաբերությունների նոր որակի ստեղծմանը:
- Իսրայելի հետ Խաղաղության համաձայնագրի կնքումից չորս տարի անց՝ 1999 թ. փետրվարին, մահացավ մերձավորարևելյան տարածաշրջանի ամենահեղինակավոր և խարիզմատիկ առաջնորդներից մեկը՝ Հուսեյն թագավորը, ով իր կյանքի վերջին հինգ տարիներն ամբողջությամբ նվիրեց Արևմուտքի՝ մասնավորապես ԱՄՆ–ի, նաև՝ Իսրայելի հետ հարաբերությունների սերտացմանը: Նրան հաջորդած Աբդալլահ երկրորդ թագավորը շարունակեց հոր

քաղաքականությունն Արևմուտքի և Իսրայելի հետ հարաբերությունների զարգացման գործում՝ դրա հետ մեկտեղ ամրապնդելով նաև Հորդանանի դերն արաբական աշխարհում:

- 1999-2014 թթ. Հորդանանի քաղաքականությունը թե՛ Իսրայելի, թե՛ Պաղեստինի, ինչպես նաև մերձավորարևելյան հակամարտության խաղաղ կարգավորման հարցում աչքի է ընկել հավասարակշռված, զուսպ մոտեցումներով ու պրագմատիզմով: Հորդանանն այն բացառիկ արաբական պետություններից էր Եգիպտոսից հետո, որը խաղաղության համաձայնագիր ուներ Իսրայելի հետ, ինչը չէր կաշկանդում Հորդանանին՝ պաշտպանել պաղեստինյան հարցի արդարացի լուծումը: Պաղեստինյան հարցի հետ կապված արծարծումներում Հորդանանն ամենազգայուն պետությունն էր, որը կապված էր Պաղեստինի հետ Հաշիմյանների ունեցած պատմական ու քաղաքական սերտ աղերսների, նաև այն հանգամանքի հետ, որ հորդանանյան հասարակության կեսը պաղեստինցիներ էին: Եվ չնայած պաղեստինյան գործոնը պատմական տարբեր ժամանակաշրջաններում ապակայունացնող դեր է խաղացել Հորդանանի ներքաղաքական զարգացումներում, Աբդալլահ երկրորդի կառավարման ընթացքում Հորդանանի ազգային անվտանգության համակարգը կայուն էր, իսկ պետությունը շահեկանորեն համագործակցում էր թե՛ Իսրայելի և թե՛ ԱՄՆ-ի հետ:
- Աբդալլահ երկրորդ թագավորի կարծիքով՝ պաղեստինահիսրայելական հակամարտության չլուծված լինելն ամենալուրջ սպառնալիքն է տարածաշրջանի, ներառյալ Միջերկրածովյանի խաղաղությանն ու կայունությանը, ինչպես նաև արաբահիսրայելական խաղաղության ձախողման պատճառը: Հորդանանի առաջնորդը, որպես կանոն, համարում է, որ պաղեստինյան հարցը պետք է ունենա առաջնահերթություն մերձավորարևելյան մնացած հարցերի նկատմամբ: Աբդալլահ թագավորի համոզմամբ՝ հակամարտության կարգավորումը միայն կարող է հանգեցնել տարածաշրջանի ծաղկմանը, առաջընթացին և անվտանգության համակարգի ամրապնդմանը:
- 1999-2014 թթ. Հորդանանը բացառիկ մեծ տեղ է հատկացրել պաղեստինյան հարցին և պաղեստինահիսրայելական հակամարտությանը: Առանց անտեսելու տարածաշրջանային մնացած խնդիրները (Իրաքի, Սիրիայի, 2013 թ.-ից՝ «Իսլամական պետության» և այլն)՝ պաղեստինյան խնդիրը համարվել է կարևորագույնը: Պաղեստինահիսրայելական հակամարտության կարգավորման հարցում Աբդալլահ երկրորդը, շարունակելով Հուսեյն թագավորի քաղաքական գիծը, վերստին ի ցույց դրեց, որ Հորդանանը հրաժարվում է պաղեստինյան տարածքների նկատմամբ հավակնություններից և միացյալ պետության գաղափարից՝ հիմնախնդրի պատասխանատու կողմ համարելով պաղեստինցիներին, ձգտելով պահպանել իր միջնորդական առաքելությունը հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում: 1999-2014 թթ. ընթացքում Հորդանանն ակտիվորեն աջակցել է պաղեստինահիսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման արաբական նախաձեռնությանն ու Ճանապարհային քարտեզին՝ համագործակցելով «միջազգային քառյակի» հետ, Եգիպտոսի հետ միասին հանդես եկել կարգավորման սեփական նախաձեռնությամբ ու միջնորդական առաքելությամբ:

- Չնայած Իսրայելի հետ սերտ համագործակցությանը՝ Հորդանանը Աբդալլահ երկրորդի կառավարման տարիներին ակտիվորեն քննադատել է Իսրայելի քաղաքականությունը թե՛ վերաբնակեցման, թե՛ պաղեստինյան տարածքներում ռազմական գործողություններ իրականացնելու, խաղաղ բնակչության նկատմամբ բռնություններ կիրառելու և Երուսաղեմի դիմագիծը փոխելու հարցում՝ համարելով, որ դրանք բացասական հետևանքներ կունենան հակամարտության խաղաղ կարգավորման վրա: Հորդանանը մեղադրել է Իսրայելին հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացն առաջ չտանելու և խոչընդոտներ ստեղծելու մեջ:
- Աբդալլահ երկրորդի կառավարման տարիներին Հորդանանի և Իսրայելի հարաբերություններն, ընդհանուր առմամբ, եղել են համագործակցային: Չնայած որոշակի խնդիրներին՝ բազմակողմ համագործակցությունը շարունակվել է: Երկկողմ հարաբերություններում առկա սառնության պատճառներից են եղել պաղեստինյան հարցի կարգավորված չլինելն ու հորդանանյան հասարակության մի զգալի մասի հակաիսրայելական տրամադրությունները: Հորդանանի և Իսրայելի միջև շփումները հատկապես լարված են եղել, երբ ամեն անգամ իշխանության մեջ է եղել Լիկուդ կուսակցությունը:
- Պաղեստինաիսրայելական հակամարտության կարգավորված չլինելուն զուգահեռ «արաբական գարնան» և դրան հաջորդած շրջանում պաղեստինյան հարցն ինչ որ իմաստով կորցրեց իր առաջնային նշանակությունը: 2011թ.-ից սիրիական պատերազմը, իսկ 2014 թ.-ից՝ «Իսլամական պետության» գոյությունը, դարձան տարածաշրջանի կայունությանն ու անվտանգությանն ուղղված գլխավոր սպառնալիքները: Միջազգային, այդ թվում՝ Հորդանանի ջանքերը, էականորեն չծառայեցին իրենց նպատակին: Հակամարտության խաղաղ կարգավորման հեռանկարը դարձավ վիճարկելի, ինչը նպաստեց, որպեսզի Հորդանանը կասկածի տակ առնի հակամարտության խաղաղ կարգավորման հնարավորությունները:
- Չնայած երկկողմ հարաբերություններում առկա խոչընդոտներին և շատ դեպքերում դրանց պատճառների անհաղթահարելիությանը, Հորդանանը և Իսրայելը կարողացան պահպանել իրենց գործընկերությունը և խաղաղության համաձայնագրով ամրագրված դրույթները: Համագործակցության պահպանմանը նպաստեցին փոխադարձ շահերն ու հետաքրքրությունները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Ջրի խնդիրը հորդանանաիսրայելական հարաբերություններում. առճակատումից մինչև համագործակցություն, Մերձավոր Արևելք, հոդվածների ժողովածու, IX-X, Երևան, 2014, էջ 452-463:

2. Պաղեստինյան հարցը հորդանանաիսրայելական հարաբերությունների համատեքստում Աբդալլահ II-ի կառավարման շրջանում, Արաբագիտական ուսումնասիրություններ, №7, Երևան, 2014, էջ 113-130:

3. 1994 թ. հորդանանաիսրայելական խաղաղության համաձայնագիրը՝ որպես քեմփդեվիդյան գործընթացի շարունակություն, Կանթեղ, գիտական հոդվածներ, 1(62), Երևան, 2015, էջ 125-136:

КАЗАРЯН САРКИС ОВСЕПОВИЧ

ИОРДАНО-ИЗРАИЛЬСКИЕ ОТНОШЕНИЯ В КОНЦЕ 20-го ВЕКА В НАЧАЛЕ 21-го ВЕКА: ОТ КОНФРОНТАЦИИ ДО СОТРУДНИЧЕСТВА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02-«Всемирная история».
Защита состоится 30-го июня 2015 г., в 15.00 ч., на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяана 24/4

РЕЗЮМЕ

Изучение отношений между Иорданским Хашимидским Королевством и Государством Израиль имеет как научную, так и политическую значимость. Это не только способствует правильной оценке двусторонних отношений и конфликта на Ближнем Востоке, но и особенностям внешней политики Иордании и Израиля. Один из самых главных вопросов иордано-израильских отношений - палестинский вопрос. В связи с этим изучение двусторонних отношений, обусловленных палестинским фактором, имеет не менее важную значимость. Актуальность темы **"Иордано-израильские отношения в конце 20-го века в начале 21-го века: от конфронтации до сотрудничества"**, обусловлена необходимостью комплексного изучения отношений Иордании и Израиля и сути палестинского вопроса, без которого полный образ текущих событий Ближнего Востока невозможно понять.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы.

Первая глава диссертации - **"Особенности развития иордано-израильских отношений (1947-1999гг.)"**, с одной стороны посвящена эволюции истории отношений между Израилем и Хашимидами, с другой стороны обострению палестино-израильского конфликта и значимости палестинского фактора в двусторонних отношениях. Рассматриваются точки зрения Иордании и Израиля в вопросе урегулирования конфликта, а также международные усилия и особенности подхода палестинцев. Особо была рассмотрена идея единого государства, выдвинутая королем Иордании Хусейном и позднее отвергнутая теми же Хашимидами, и подход Израиля, Палестины и США, относительно этого вопроса. Подробно были анализированы заключения мирного соглашения между Иорданией и Израилем в 1994 г., а также имеющиеся колебания в двусторонних отношениях в 1994-1999гг. Первая глава состоит из четырех заголовок.

Вторая глава **-"Иордано-израильские отношения и палестинский вопрос при правлении короля Абдаллы II (1999-2014)"**, посвящена позиции Иордании к

палестинскому вопросу и изучению отношений с Израилем в период правления короля Абдаллы II (1999-2014гг.). Рассматриваются усилия Иордании в вопросе мирного урегулирования конфликта Ближнего Востока и отношения с Израилем, акцентируется вопрос палестино-израильского конфликта. Особо рассматриваются все международные саммиты, посвященные палестино-израильскому конфликту в намеченное время. Вторая глава состоит из пяти заголовок.

В третьей главе **- "Проблема воды и рамки иордано-израильского сотрудничества"**, рассматриваются: водный фактор, имеющийся в двусторонних отношениях, торгово-экономические и другие области отношений. Через некоторое время, после иордано-израильского мирного договора 1994 г., последовали подписания отдельных соглашений и меморандумов в ряде министерств двух государств, что сделало более ощутимым многостороннее сотрудничество. Тем не менее, несмотря на имеющиеся проблемы и некоторые препятствия в отдельных областях, двусторонние отношения процветали. Лучшим проявлением сотрудничества между Иорданией и Израилем стало двустороннее соглашение 26 февраля 2015 г., которое предусматривает построение канала совместными усилиями с Красного моря к Мертвому морю, для того, чтобы спасти Мертвое море от высыхания. Третья глава состоит из двух заголовок.

В заключении обобщены основные выводы работы. Соответственно, Иордания и Израиль, несмотря на арабо-израильский конфликт и антагонизм, который длился десятилетиями, в 1994 г. смогли достичь мира. Несмотря на многие препятствия, главный из которого остается нерешенный палестино-израильский конфликт, сторонам удалось сформировать многостороннее сотрудничество, которое вызвано взаимной выгодой и интересами двух государств.

GHAZARYAN SARGIS HOVSEP

THE JORDANIAN-ISRAELI RELATIONS IN THE END OF THE 20TH CENTURY IN THE BEGINNING OF THE 21ST CENTURY: FROM CONFRONTATION TO COOPERATION

The defense of the dissertation will take place at 15.00, on June 30, 2015 at the meeting of Specialized Council 006 "World History" acting at the Institute of Oriental Studies of NAS RA.
Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4.
The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History" 07.00.02

SUMMARY

The study of the relations between the Hashemite Kingdom of Jordan and the State of Israel has both scientific and political significance. It helps to clearly identify not only the bilateral relations and the Middle East conflict, but also the distinguishing features of external policy of Jordan and Israel. One of the most important points in the Jordanian-Israeli relations is the Palestinian issue. The study of the bilateral relations conditioned by Palestinian factor has no less significance so far. The actuality of the topic-**"The Jordanian-Israeli relations in the end of the 20th century in the beginning of the 21st century: from confrontation to cooperation"** is abutted by the necessity to study the Jordanian-Israeli relations and the essence of the Palestinian issue more comprehensively without which it is not possible to have a complete image of modern developments in the Middle East.

The dissertation consists of Introduction, three chapters, Conclusion, list of the used sources and literature. The first chapter of the dissertation **-"The characteristics of the Jordanian-Israeli relations development (1947-1999)"** is dedicated to the evolution of history of the relations between Hashemite Kingdom and Israel as well as to the escalation of the Palestinian-Israeli conflict and the importance that the Palestinian factor has in bilateral relations. The standpoints of Israel and Jordan concerning the regulation of the conflict as well as the international efforts and the distinguishing features of Palestinian approach are introduced. A special reflection has been made to the idea of the united state, which was proposed by King Hussein and then rejected by the same Hashemites, as well as to the approaches of Israel, Palestine and the United States. The Peace Agreement signed by Jordan and Israel in 1994 as well as 1994-1999 tensions existed in bilateral relations passed expertise. The first chapter is composed of 4 sub-chapters.

The second chapter entitled **"The Jordanian-Israeli relations and the Palestinian issue under king Abdullah II's rule (1999-2014)"** is dedicated to the Jordanian stance towards the Palestinian issue and to the study of the relations with Israel during the reign of

Abdullah II King (1999-2014). The efforts of Jordan for peaceful settlement of the Middle East conflict and relations with Israel are enshrined and a special accent was put on the Palestinian-Israeli conflict. A particular preference was made to all the international summits dedicated to the Palestinian-Israeli conflict. The second chapter is composed of 5 sub-chapters.

The third chapter entitled **"The Water Issue and frames of Jordanian-Israeli cooperation"** refers to the water factor in bilateral relations, trade-economical and other aspects of the relations. The 1994 Jordanian-Israeli Peace Agreement fostered the conclusion of inter-ministerial agreements and memorandums which made the cooperation between two countries more perseptible in different spheres. In spite of the existing problems and obstacles the bilateral relations were developed. The best expression of the existing cooperation between Israel and Jordan was the bilateral agreement as of 26 February, 2015 which foresees the construction of water channel by joint efforts which would supply the Dead Sea with water from Red Sea in order to save the Dead Sea from drying up. The third chapter is composed of 2 sub-chapters.

The main results of the work are summed up in the Conclusion. According to that Jordan and Israel in spite of the Arab-Israeli conflict and antagonism lasted for many years could achieve peace in 1994. Notwithstanding numerous obstacles, the main one of which remains the Palestinian-Israeli conflict, the parties could form a multi-aspect cooperation dictated by mutual benefits and interests of the two states.